ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06- օգոստոսի 2014թ. Թիվ 102- Ա

ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ- 728 հրամանագրի 1.20 և 1.21 կետերով, ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի հունիսի 5-ի N 01/15/2927-14 հանձնարարականի պահանջներով, ինչպես նաև բնապահպանական աշխատանքների վերահսկման արդյունավետության բարձրացման, ապօրինի զանգվածային անտառահատումները կանխելու, բնապահպանական այլ խնդիրների իրականացմանը համագործակցելու նպատակով

Ո ր ո շ ու մ եմ.

1. Մարզի տարածքի անտառտնտեսությունների տնօրեններ Ա.Ղալթախչյանին, Ա.Երիցյանին, Հ.Ադամյանին, Վ.Չիլինգարյանին /համապատասխանաբար /Իջևանի, Սևքարի, Արծվաբերդի, Նոյեմբերյանի/, Հ. Ղուլիջանյանին /Զիկատար բնապահպանական կենտրոն ՊՈԱԿ/ , Ա.Դավթյանին /Դիլիջանի ազգային պարկ/.

   1/ Կտրուկ միջոցառումներ ձեռնարկել ապօրինի անտառահատումների, անօրինական ձեռք բերված շինափայտի սղոցումների և անօրինական փայտանյութը մարզի տարածքից արտահանումը կանխելու ուղղությամբ:

   2/ Ապօրինի անտառահատումների համար միջին օղակի աշխատողների նկատմամբ ուժեղացնել հսկողությունը, թերացողներին ենթարկել պատասխանատվության:

   3/ Միջոցներ ձեռնարկել հակահրդեհային միջոցառումների ծրագրերում ընդգրկված աշխատանքները ժամանակին և օպերատիվ ձևով իրականացնելու համար, լրացուցիչ հրդեհաշեջ միջոցներ հատկացնել այդ նպատակով /համաձայնեցնելով <<Հայանտառի>> ՊՈԱԿ-ի հետ:
2. Տարածքային բնապահպանական պետական տեսչության պետ Ա.Մանուչարյանին՝

1/ Միջոցներ ձեռնարկել կանխելու զանգվածային ապօրինի ծառահատումները, անօրինական ձեռք բերված շինափայտի սղոցումները:

1/Պարբերաբար, եռամսյակային հաշվետվությունների ավարտից և տվյալների ամփոփումից հետո մարզպետարան ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն, որպեսզի մարզի տարածքում իրականացվող բնապահպանական աշխատանքները արտացոլվեն նաև մարզպետարանի բնապահպանության ծառայության կողմից պարբերաբար ներկայացվող տեղեկատվություններում, մարզխորհրդի նիստերում /համաձայն հավելված 1-ի/:

3. Մարզային հարկային տեսչության պետ Ն.Զարգարյանին.

   Ստուգել մասնավոր սղոցարանների և փայտամշակման արտադրամասերի գործունեության օրինականությունը և տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան:
4. Մարզպետարանի աշխատակազմի բնապահպանության բաժնի վարիչ Ս.Գևորգյանին.

1/ Կազմել ստուգայցերի անցկացման միջոցառումների ծրագիր, համաձայնեցնելով Տավուշի մարզային դատախազության, ոստիկանության Տավուշի մարզային վարչության, ԱԱ մարզային վարչության, բնապահպանական տարածքային պետական տեսչության հետ և ղեկավարվել դրանով:

2/ Մարզի տարածքում պարբերաբար անցկացնել ստուգայցեր՝ համագործակցելով իրավապահ մարմինների, Տավուշի տարածքային բնապահպանական տեսչության, ինչպես նաև համապատասխան անտառտնտեսությունների հետ:

3/ Լայն ծավալի քարոզչական, մեթոդական պարզաբանումներ իրականացնել մարզային լրատվության միջոցներով բնապահպանական օրենսդրության հիմնական պահանջների իրագործման վերաբերյալ:

5. Ստեղծել բնապահպանական օպերատիվ խումբ հետևյալ կազմով.

Վ.Սուքոյան - գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ս.Գևորգյան - բնապահպանության բաժնի վարիչ
Ա.Ամիրխանյան - բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ
- մարզային դատախազություն /համաձայնությամբ/
- Ոստիկանության մարզային վարչություն /համաձայնությամբ/
- ԱԱ մարզային վարչություն /համաձայնությամբ/
- Բնապահպանության Տավուշի տարածքային պետական տեսչություն /համաձայնությամբ/

6. Ոստիկանության մարզային վարչության պետ պարոն Ա.Գևորգյանին.

1/ Ոստիկանության տարածքային բաժինների պետերի միջոցով ապահովել աջակցությունը տարածքներում իրականացվող բնապահպանական ստուգայցերին:

2/ Մարզային վարչությունից նախապես առանձնացնել պատասխանատու աշխատակից անհրաժեշտության դեպքում բնապահպանական օպերատիվ խմբի աշխատանքներին մասնակցելու և աջակցելու նպատակով:

7. Հաստատել Տավուշի մարզպետարանի, Տավուշի մարզային դատախազության, ոստիկանության Տավուշի մարզային վարչության, ԱԱ մարզային վարչության և բնապահպանության տարածքային պետական տեսչության աջակցությամբ կատարվող համատեղ աշխատանքների միջոցառումների ծրագիրը:

8. Հանձնախմբին՝ յուրաքանչյուր կիսամյակ տեղեկատվություն ներկայացնել մարզպետին կատարված աշխատանքների ընթացքի մասին:

9. Մարզի բոլոր համայնքապետերին՝ ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45 հոդվածի պահանջներով համայնքի վարչական տարածքներում բացառել անօրինական անտառահատման և փայտամշակման անօրինական ցանկացած գործունեություն, դրանց վերաբերյալ կիսամյակը մեկ տեղեկատվություն ներկայացնել մարզխորհրդին:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ԱԲՈՎՅԱՆ

2014թ. Օգոստոսի 6
ք. Իջևան